ԲԱՑ ՆԱՄԱԿ ԳՐ. ՔԷՕՍԷԵԱՆԻՆ

Բոստոն, «Պայքար» թերթի խմբագրություն

Հարգելի պարոն Քէօսէեան,

1988-ին պայթեց Արցախը, եւ նրա ժայթքումը անմարդկային կրակմարիչներով սառեցնել փորձող Կրեմլ-թուրքական «հրշեջների» վայրագություններին հաջորդեց բնավեր երկրաշարժը:

Ու Հայաստանը երերաց:

Երերաց, ու որպեսզի հիմնահատակ չլինի լրիվ (կեսն արդեն եղել է), աշխարհը նրան ձեռք մեկնեց: Կրեմլի՝ Հայաստանը նորոգելու երկամյա խոստումները սին դուրս եկան, եւ ամերիկահայ գործարար ծանոթներիցս մեկը հաստատ համոզված ասում էր...*«Սուլիեա Միութեան վրայով բան չեմ կարող ուղարկել: Ուղարկեմ ումի՞ց ստանամ: Նույնիսկ Թուրքիո վրայով կգերադասեմ: Պետութիւն է. կորավ, կպահանջեմ»*:

Այսպիսի խառնիխուռն ժամանակներ են, եւ այս նեղ վիճակից դուրս գալու համար յուրաքանչյուր բարեկամ ձգտում է մեզ օգտակար լինել, ով ինչով կարող է: Էստրադայինի երգիչների արքա Շառլ Ազնավուրը Հայաստանին օգնելու մի ամբողջ օրակարգ է տեղծել Սպիտակի փլատակների առաջ արցունքախառն կանգնելուց առաջ եւ հետո, Ռոզի Արմենը Փարիզի հայտնի ֆիրմայից շեփորներ է ձեռք բերել, եկել Երեւան ու ինքն անձամբ հանձնել Հայաստանի ռադիոյի նվագախմբին, Լեւոն Գաբրճյանը *«Հայ Արցախ»* երգերի շարք է գրել տողերիս հեղինակի որոշ օգնությամբ, Երեւանում համերգ տվել Արցախի համար, անգամ իր բարեկամների համար սեփական գրպանից տոմսեր գնելով, Հովիկ Գրիգորյանը իր համերգներից մեկը նվիրեց Մոսկվայում հացադուլի միջոցով իրենց ճիշն աշխարհին ուղղած Վիկտոր Համբարձումյանին, Զորի Բալայանին, մյուսներին, Մարթեն Ցորգանցը Երեւանի իր համերգներից ստացած երեւի ամբողջ գումարի արժողությամբ մի հսկա ծաղկեպսակ էր Միջեռնակաբերդի բարձունք բերել ապրիլի 24-ին:

Գուցե ա՞յս մարդիկ են այն *«յաճախ երկրորդական արժէքով էսթրադային երգիչ մի»*ները, որ վերջին մի քանի տարում եկել են Հայաստան ու նրանց մասին երկարբարակ գրել է Արմենպրեսը: Բայց չէ՞ որ այս մարդիկ եկել են մասնակցելու Հայաստանի փրկությանը: Այո, փրկությանը, որովհետեւ հիմա մենք 15 թ. ու թաթարմոնղոլների ժամանակների նախաշեմին ենք, Լենկթեմուրի ժամանակների, միայն հիմա այդ Լենկթեմուրը շիկահեր է ու մի այլ այլալեզու:

Հիմա դառնանք *«երկրորդական արժէքով նկարիչներու»*, որոնք Հայաստան են այցելել 1988-ի ցնցումից հետո: Մարտիրոս Սարյանի անվան մրցանակի դափնեկիր Ռիշար Ժերանյան, իրանահայ ծովանկարիչ Հարություն Մինասյան, Պետրոս Ապանյան (Հունաստան): Գուցե այս մարդկանց մեղքը այն է, որ ամեն մեկն իր հնարավորության չափ գումա՞ր է հատկացրել հայրենիքին, աղետի գոտուն, իր կտավներում պատկերել երկրաշարժը, եւ անցյալ տարի մեկ ամսով բանուգործը թողած եկել «սված-ծարավ» Հայաստան ու Ղրիմ, որպեսզի նկար անի Այվազովսկու բացվելիք թանգարանի համար, Հայաստանի համար, որպեսզի Արցախ ու Հայաստան նկարի ու ցուցադրի արտասահմանում, ինչպես օրինակ, Փարիզի Ֆորուր Սենտ Օնորե հայտնի ցուցասրահում (Ժերանյան): Կամ իր ֆրանսուհի տիկնոջով նրանց միացած, երկրաշարժի առաջին օրերից այստեղ «Սոս Արմենիի» նվերները բաժանող Կլոդ-Արմեն Մութաֆյանը, որը Երեւանում ու Մոսկվայում բացել է իր հոր, երեւի ձեր կարծիքով նույնպես *«երկրորդական արժէքով նկարիչ մը»*, Զարեհ Մութաֆյանի ցուցահանդեսը: Չգիտեմ, ինչու եք ամաչել, անուններ չեք տվել: Մեր իմացած *«երկրորդական»* անունները սրանք են եղել, որոնց հետ ըստ ձեզ *«ժան շաղակրատանքներ»* է արել Արմենպրեսի թղթակիցը, տվյալ դեպքում՝ ձեր խոնարհ ծառա տողերիս հեղինակը:

Առանց փաստերի խոսելուց հետո այնուհետեւ անցնում եք *«փաստերին»*:

Երեւանում գազի պայթյունից տուն է ավերվել: Արմենպրեսը տվել է պաշտոնական հաղորդագրություն, ասելով, որ *«ամենաահավորը՝ կան մարդկային զոհեր եւ բազմաթիվ վիրավորներ»*: Եթե հաղորդման տվյալ պահին խմբագրությունը հնարավորություն չի ունեցել ճշտելու թիվը եւ օգտագործել է *«բազմաթիվ»* բառը (եթե թիվն ասած լիներ ի՞նչ կփոխվեր աշխարհում), նշանակո՞ւմ է, արդյոք, թե դուք այսպես պիտի մենկնաբանեք *«բռնատիրական կարգերու» օրերու լրատուութիւնը այսպէս կը կատարուէր... նոյն ձեւով կը կատարուի այսօր անկախութեան հռչակագիրէն ետքն ալ»*:

Այ քեզ բան: Այդքան մտահոգված էիք, մի քանի դոլլար ուղարկեիք այդ տուժածների ընտանիքներին:

Թե չէ, էդ նույն բռնատիրական կարգերը չէի՞ն, որ այս յոթանասուն տարվա ընթացքում չէիք տեսնում ու միայն ըզբաղված էիք *«մայր հայրենիք... մայր հայրենիք»* կանչելով, հերթ չտալով ուրիշներին: Թե՞ միայն «խորհրդային քաժերին» էր մեղավոր, որ մայր հայրենիքից մեզ մոտ եկած հյուրերը «թշնամի» դաշնակցականների ակումբ կամ միություններ չէին գնում:

Թե չէ՝ սովորեցնում եք:

Արմենպրեսը ի՞նչ սխալվոր հանցանք է գործել, որ գրել է, թե բաղաքապետի պաշտոնակատարը *«դիմում կատարած է իր պարտականություններից ազատուելու համար»*: Ոչ, ասում եք, պիտի գրեր՝ հրաժարագիր է տվել: Նույնը չե՞ն:

Ձեր հոդվածում մի քանի խորհուրդներ եք տվել, որոնք կրկնելու հարկ չկա: Մի խորհուրդ էլ ես եմ ուզում տալ: Արմենպրեսը 1967 թվականից օրական 12-15 մեքենագիր էջի սահմաններում լուրեր է հաղորդում սփյուռքի հայկական թերթերին՝ անվճար, առանց շահի: Այդքան լուրեր չի տպագրում ինձ ծանոթ սփյուռքահայ ոչ մի թերթ, եւ չի հաղորդում ոչ մի ռադիոկայան՝ օրական: Այդ ծավալի համար ՏԱՍՍ գործակալությունից «նվաճված» է երկու ժամ ժամանակ, եւ այդ թանկագին երկու ժամը չկորցնելու համար հնարավոր է, որ նյութերի մեջ «ծավալախախտումներ» լինեն: Այդպես է եղել ձեր «հայտնաբերած» ժամանակում, հիմա էլ կլինի: Այլապես ժամը կկորցնենք եւ օրվա ընթացքում ձեզ կտանք մի քանի նյութ կամ ընդհանրապես չենք տա: Կարծում եմ, որ այսպիսի լայն ընտրության համար դուք պիտի գոնե մեկ անգամ շնորհակալություն հայտնեիք այս անցած... 24 տարիների ընթացքում, եթե, իհարկե, օգտվում եք մեր նյութերից: Եթե չեք օգտվում, ապա, չեմ հասկանում, ինչու է... սայլի տեղ սելվորը ճռռում:

Եւ եթե հարմար չեք գտել շնորհակալություն հայտնել ու կարծում եք, թե Արմենպրեսը պարտավոր է այդ անելու, ապա, փառք Աստծո, երկրագնդում ինչն է ավելի առատ, քան հեռատիպը: Ձեզ համար թղթակցությունը լրացնելու համար նույն պահին կարող եք հարցում անել: Դժվա՞ր է՝ դիմեք Արփիկ Միսակյանին, նա կօգնի:

Ինքս կարող եմ ձեզ շնորհակալություն հայտնել նախ այն բանի համար, որ պատիվ եք արել մեզ դիտողություններ անելու, որոնց մի մասը ընդունում ենք, անշուշտ, բայց թե որոնք, պահում եմ *«երկրորդական կարգի արթիստներու»* շարքում: Եւ երկրորդ՝ շնորհակալություն, որ «Պայքարում» տպագրած ձեր՝ «Ոգիին հետ նորոգել նաեւ բառամթերքը» հոդվածը զետեղել է իմ բարեկամ Հակոբ Ավետիքյանը իր՝ Երեւանում լույս ընծայվող «Ազգ» թերթում: Այլապես ինչպես պիտի իմանայի ձեր հոգսերի մասին հայրենի գազի պայթյունների, պաշտոնափոխությունների եւ մեր բառամթերքը շտկելու վերաբերյալ, մանավանդ որ այս 24 տարիների ընթացքում, ի տարբերություն ուրիշների, ձեզ Արմենպրեսում չենք տեսել գոնե... մեկ անգամ:

Հարգանքներով՝

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՃԱՆ

Արմենպրեսի սփյուռքահայ մամուլի համար լրատվության բաժնի վարիչ

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒ